ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14» ԾԱԾԿԱԳՐՈՎ
(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 27.05.2026թ.
Ժամը 11[30]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
ՀՀ ՊՆ Ս և ՏԱՎ ավտոմոբիլային ծառայության շահագործման և վերականգնման բաժնի ավագ սպա, մայոր Երեմ Մարգարյան,(ԳԱՊ),
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ Ս և ՏԱՎ ավտոմոբիլային ծառայության շահագործման և վերականգնման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Արզուն Հովհաննիսյան,
ՀՀ ՊՆ սպառազինության և տեխնիկական ապահովման վարչության ավտոմոբիլային ծառայության շահագործման և վերականգնման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Արսեն Ղուկասյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Ա. Սիմոնյան:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14» ծածկագրով (ԳՀ) ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Սիմոնյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Ա. Սիմոնյան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

1.2

Հ/հ	Մասնակիցների անվանումները
1	«Արպանիվ» Ա/Ձ
2	«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2 .« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են: Քանի որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14» ծածկագրով ընթացակարգի մասնակիցներ «Արպանիվ» ՍՊԸ-ն և «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ն հայտի ապահովումը ներկայացրել են կանխիկ փողի ձևով, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետը՝ համաձայն ՀՀ Ֆինանսների Նախարության N 03/12-1/2884-2024 գրության, վերոնշյալ փաստաթղթի իսկությունը ստուգելու ստուգելու նպատակով 20.05.2026թ. հարցում է կատարվել ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչությանը: 27.05.2026թ. հայտերի գնահատման և ամփոփման նիստի ժամանակ՝ գնահատող հանձնաժողովը արձանագրեց, որ ՀՀ ՊՆ ֆինանսաբյուջետային վարչության տրամադրած տեղեկատվության համաձայն «Արպանիվ» և «Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ-ների կողմից ներկայացված կանխիկ փողի ձևով հայտի ապահովումը համապատասխանում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին:

2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին)

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

3.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14» ծածկագրով ընթացակարգին գնային առաջարկ են ներկայացրել 2 մասնակիցներ.

ՀՀ դրամ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	չ/մ	Քանակը	Գնման գինը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների			
					անվանումները	գնային առաջարկները		
						առանց ԱԱՀ	ԱԱՀ	ընդհանուր գինը
1	**ավտոմեքենաների անիվներ (Անվադող 225/75R16 ամառային)**	Հատ	1600	41 440 000	**«Արպանիվ» ՍՊԸ**	**66 184 000**	**13 236 800**	**79 420 800**
					«Ավտոֆան Էյ Սի» ՍՊԸ	72 666 666	14 533 334	87 200 000

3.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/:

3.3 Բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների որոշման մասին.

4.1 Հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը՝ 27.05.2026թ. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով հանձնաժողովը քննարկելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի №526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 6-րդ ենթակետի (նախահաշվային գնից բարձր նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ պայմանով պայմանագրի կնքում) կիրառման հնարավորությունը և հաշվի առնելով, որ 1-ին չափաբաժնի անվադողերը նախատեսված են «ՈՒԱԶ» մակնիշի ավտոմեքենաների համար, որոնցով իրականացվում է զինված ուժերի մարտական խնդիրների կատարումը և ժամկետի առումով նոր գնման ընթացակարգի կիրառումը կարող է ազդել ԶՈՒ մարտունակության վրա, ուստի հանձնաժողովը որոշեց կիրառել վերոնշյալ որոշման համապատասխան կետը «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14» ծածկագրով ընթացակարգի համար և ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Արպանիվ» ՍՊԸ-ին և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

4.2 Հանձնաժողովը որոշեց անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցին պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել: Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14»

ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Սույն ընթացակարգի մասով սահմանվում է տասնօրյա անգործության ժամկետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Ա. Սիմոնյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-26-4/14» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Ե. Մարգարյան
Գնահատող	Ա. Հովհաննիսյան
Գնահատող	Ա. Ղուկասյան
Գնումները համակարգող՝	Ա. Սիմոնյան